ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 26.12.2013Թ. ԹԻՎ 33/6-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ, ՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի և Տարոն Սիմոնյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի՝ 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգում **(այսուհետ՝ Կարգ)** լրացում կատարելու հարցը քննարկելու մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

«Փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի վճարի, փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների, ինչպես նաև այլ վճարների չափերը սահմանելու մասին» Պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/8-Լ որոշմամբ **(այսուհետ նաև՝ Որոշում)** նախատեսված են դեպքեր, երբ փաստաբաններն անդամավճար չեն վճարում, օրինակ՝ 70 տարին լրանալու կամ առաջին կարգի հաշմություն ունենալու հիմքով: Ընդ որում՝ նշված դեպքերում փաստաբանն անդամավճարից ազատվում է անժամկետ:

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 36-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են փաստաբանի արտոնագրի գործողության դադարման հիմքերը: Նշված հոդվածով, ի թիվս այլոց՝ որպես փաստաբանական գործունեության արտոնագրի գործողության դադարեցման հիմք նշված են այն դեպքերը, երբ փաստաբանն, օրինակ՝ դիմում է ներկայացրել իր արտոնագրի գործողությունը դադարեցնելու համար, կամ առաջացել են փաստաբանական գործունեության

23 հոկտեմբերի 2018թ.
թիվ 19/8-Լ

սահմանափակումներ (Օրենքի 33-րդ հոդված), կամ երբ փաստաբանը մահացել է:

Գործնականում լինում են իրավիճակներ, երբ Որոշմամբ նախատեսված անդամավճարից ազատման կամ արտոնագրի գործողությունը դադարելու՝ Օրենքի 36-րդ հոդվածով սահմանված դեպքերում փաստաբանն անդամավճարից ազատման կամ արտոնագրի դադարման օրվա դրությամբ անդամավճարի պարտք է ունենում և օբյեկտիվորեն չի կարողանում վճարել անդամավճարի կուտակված պարտքը, օրինակ՝ անվճարունակ լինելու հետևանքով:

Անդամավճարից ազատման կամ արտոնագրի դադարման դեպքերում փաստաբանի համար անդամավճարի հետագա հաշվեգրում չի կատարվում, սակայն որոշակի օրվա դրությամբ անդամավճարի կուտակված և փաստացի չմարած պարտավորությունը (կետանցված պարտավորություն) Պալատի հաշվապահական հաշվառման համակարգում շարունակում է մնալ որպես դեբիտորական կետանցված պարտավորություն, որն օբյեկտիվորեն անհուսալի է:

Նշված իրավիճակն արհեստականորեն ուռճացնում է Պալատի եկամուտները:

Նկարագրված խնդիրը կարգավորելու համար առաջարկվում է «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգում լրացում կատարել՝ Պալատին իրավունք վերապահելով օրենքով սահմանված կարգով դուրս գրել փաստաբանի անհուսալի դեբիտորական պարտավորությունը (պարտքը)՝ կետանցված դառնալու 366-րդ օրվանից: Ընդ որում՝ այդ մոտեցումը բխում է հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (մասնավորապես՝ ՀՀՄՍ 37-ի) պահանջներից:

Առաջարկվող կարգավորումը կհավասարակշռի Պալատի ծախսերն ու եկամուտներն այն առումով, որ Պալատի եկամուտները չեն գերագնահատվի, իսկ ծախսերը չեն թերագնահատվի, ինչպես նաև կնպաստի Պալատի տարեկան ֆինանսական հաշվետվությունների ճշմարիտ ներկայացմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, ինչպես նաև Պալատի կանոնադրության 16.5 կետի 31-րդ ենթակետի պահանջներով՝ Պալատի խորհուրդը միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի՝ 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգը լրացնել նոր՝ 9.[2] կետով՝ հետևյալ բովանդակությամբ. ***«9.[2] Այն դեպքում, երբ փաստաբանը Պալատի ներքին իրավական ակտով սահմանված կարգով ազատված է անդամավճար վճարելուց կամ վերջինիս փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը դադարել է և անդամավճար վճարելուց ազատման կամ արտոնագրի գործողության դադարման օրվա դրությամբ փաստաբանն ունի***

անդամավճարի անհուսալի դեբիտորական կեփանցված պարտավորություն, ապա Պալատն իրավասու է օրենքով սահմանված կարգով փաստաբանի անհուսալի դեբիտորական պարտավորությունը (պարտքը) դուրս գրել՝ կեփանցված դառնալու 366-րդ օրվանից: Սույն կեփով նախատեսված հիմքով անհուսալի դեբիտորական պարտավորությունը (պարտքը) դուրս գրելու մասին որոշում է կայացնում Պալատի խորհուրդը»:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

23 հոկտեմբերի 2018թ.
թիվ 19/8-Լ
ք. Երևան